ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԱՇՏԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

05.04. 2018թ
N_53_

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐ-Ն Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի մարզպետ,

Ձեզ ենք ներկայացնում Դաշտաքար համայնքի 29.03.2018 թվականի ավագանու թիվ 5 նիստի արձանագրությունը:

Համայնքի ղեկավար՝ Ն. Մալխասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԱՇՏԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

2018 թ-ի մարտի 29-ին, ժամը 11-ին, Դաշտաքար համայնքում տեղի ունեցավ ավագանու թիվ 5 նիստը: Նրստին մասնակցում էին ավագանու անդամներ.

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

Համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ՝ Հ. Հակոբյանը
Նիստը նախագահում էր Համայնքի ղեկավար՝ Ն.Մալխասյանը
Նիստը քարտուղարում էր աշխ. քարտուղար՝ Ա. Վարդանյանը

Օրակարգում

1. Դաշտաքար համայնքի վարչական տարածքում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին հարցը.
2. Դաշտաքար համայնքի վարչական տարածքում ընդգրկված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալությամբ տրամադրելու մասին հարցը.
3. Դաշտաքար համայնքի վարչական տարածքում ընդգրկված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային կարգով օտարելու մասին հարցը.

1. Լսեցին— Դաշտաքար համայնքի վարչական տարածքում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին հարցը.

(զեկուցող՝ Ն. Մալխասյան)

Արտահայտվեցին ավագանու անդամներ Անգին Սարգսյանը և Արամ Մալխասյանը
Լսելով զեկուցողին և արտահայտվողների կարծիքները.

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.11.2011թ-ի N 1918-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով 19.03.2018թ –ի միջգերատեսչական հանձնաժողովի N 50 դրական եզրակացությունը*

*Դաշտաքարի ավագանին որոշում է.*

ՈՐՈՇՈՒՄ 13

Հաստատել Դաշտաքար համայնքի վարչական տարածքում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող կադաստրային 03-034-0150-0028 ծածկագրի տակ հաշվառված գյուղատնտեսական նշանակության 0.030013 հա արոտավայրի նպատակային նշանակության փոփոխությունը և դասել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի դասին:

Որոշումն անցավ միաձայն

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնագյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

2. Լսեցին— Դաշտաքար համայնքի վարչական տարածքում ընդգրկված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալությամբ տրամադրման մասին հարցը.

(զեկուցող՝ Ն. Մալխասյան)

Արտահայտվեցին ավագանու անդամներ Լյուդվիգ Այնագյանը և Արամ Մալխասյանը

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 14.01.2010 թվականի N 16-Ն որոշման պահանջներով՝*

*ավագանին որոշեց.*

ՈՐՈՇՈՒՄ 14

1. Տալ համաձայնություն Դաշտաքար համայնքի վարչական տարածքում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող ստորև բերված հողամասերը մրցութային կարգով տամադրել վարձակալության

| Լոտի համարը | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Ծածկագիրը | Մակերեսը /հա/ | Գնահատման շրջանը և ենթախումբը | Սուբյեկտը | Վարձակալման մեկնարկային գինը /առնվազն կադաստրի 15 %/ ՀՀ դրամ | Վարձակալությամբ հողամասի տրամադրման ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտե-սական | Արոտավայր | 0168-0016 | 13.0 | ՎՆԱ, V | ՀՀ | 4230 | 10 |
| 2 | Գյուղատնտե-սական | Արոտավայր | 0168-0016 | 3.5 | ՎՆԱ, V | ՀՀ | 1140 | 10 |
| 3 | Գյուղատնտե-սական | Վարելահող | 0177-0001 | 1,39 | ՎՆԱ, V | ՀՀ | 3930 | 10 |
| 4 | Գյուղատնտե-սական | Վարելահող այլ հողատեսք | 0118-0012<br>0118-0006 | 0.24847<br>0.06253 | ՎՆԱ, IV | Դաշտաքար համայնք | 2710 | 25 |

Որոշումն անցավ միաձայն.

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

3. Լսեցին— Դաշտաքար համայնքի վարչական տարածքում ընդգրկված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային կարգով օտարման մասին հարցը.

(զեկուցող՝ Ն. Մալխասյան)

Արտահայտվեցին ավագանու անդամներ Լյուդվիգ Այնազյանը և Արամ Մալխասյանը

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 14.01.2010 թվականի N 16-Ն որոշման պահանջներով՝*

*ավագանին որոշեց.*

ՈՐՈՇՈՒՄ 15

1. Տալ համաձայնություն աճուրդային կարգով օտարելու Դաշտաքար համայնքի վարչական տարածքում ընդգրկված համայնքային սեփականություն հանդիսացող 1,55 հա /ծածկագիր 0122-0001/ գյուղատնտեսական այլ նշանակության հողատեսքի հողամասը: